ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 դեկտեմբերի 2024թ. թիվ 1072-Ա

Վ.ՕՀԱՆՅԱՆԻՆ «ՎԱՆԱՁՈՐԻ ԹԻՎ 5 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ»
ՊՓԲԸ-Ի ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի N 129-Ն որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 85-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ենթակայության տակ գտնվող հարյուր տոկոս պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող «Վանաձորի թիվ 5 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2024 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 3 որոշումը և հաշվի առնելով Վ.Օհանյանի դիմումը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Վանիկ Սիրակի Օհանյանին նշանակել «Վանաձորի թիվ 5 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի տնօրեն և նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով՝ 2025 թվականի հունվարի 3-ից:

2. Վ.Օհանյանի վարձատրության չափը սահմանել համաձայն պայմանագրի:

X

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂԱԶԱՐՅԱՆ

2024թ. դեկտեմբերի 30
ք.Վանաձոր